Հայաստանի Հանրապետության կամավորական հրշեջ-փրկարարական խմբերի գործելակարգ

Պարզեցված տարբերակ

Վերջին անգամ փոփոխվել է՝ 31.01.2024

Այս նյութը պատրաստվել է VolFiRe ծրագրի շրջանակում:

Ծրագիրը նպաստում է կամավորների աշխատանքին արտակարգ իրավիճակներում:

Նյութը ստեղծվել է Հայկական Կարմիր խաչի և Ավստրիական Կարմիր խաչի կողմից՝ Փրկարար ծառայության, Հայկական Կարիտասի և Ավստրիական Կարիտասի աջակցությամբ:

Ծրագիրը ֆինանսավորել է Ավստրիական զարգացման գործակալությունը:

Պարզեցված տարբերակը պատրաստվել է 2025 թվականին:

Բովանդակություն

1. Նպատակը 5

2. Ինչպե՞ս են գործում կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը 6

2.1. Ի՞նչ է ասում օրենսդրությունը 6

2.2. Ի՞նչ կարգավիճակ ունեն կամավորները 8

2.3. Ի՞նչ հնարավորություններ ունեն կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը 10

2.4. Որտե՞ղ են աշխատում կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը 11

2.5. Ինչպե՞ս են աշխատում կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը պետական Փրկարար ծառայության հետ 13

2.6. Ո՞վ է օգնում կամավորական հրշեջ-փրկարարական խմբերին աշխատել 14

2.7. Ինչպե՞ս են կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը տեղեկացվում արտակարգ իրավիճակների մասին 14

2.8. Ինչպե՞ս են ապահովվում կամավոր հրշեջ-փրկարարների անվտանգությունը 15

2.9. Ինչ փաստաթղթեր են կարգավորում կամավոր հրշեջ-փրկարարական խմբերի աշխատանքը 16

2.10. Ո՞վ է վճարում կամավորական հրշեջ-փրկարարական խմբերի ծախսերը 17

3. Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերի առաքելությունը 18

3.1. Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերի աջակցությունը պետական Փրկարար ծառայությանը 20

3.1.1. Ովքե՞ր են համակարգում արտակարգ իրավիճակներին արձագանքումը 21

3.1.2. Ե՞րբ կարող է ամբողջ կամավորական հրշեջ-փրկարարական խումբը մասնակցել գործողություններին 23

3.1.3. Ինչպե՞ս են կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը աջակցում տարբեր մակարդակներում 25

3.1.4. Ինչպե՞ս է ապահովվում կամավորների անվտանգությունը Փրկարար ծառայության հրամանատարության ներքո 28
3.2. Մասնակցություն Հայկական Կարմիր խաչի մարդասիրական օգնության աշխատանքներին 29
4. Ինչպե՞ս են կազմակերպվում կամավորական հրշեջ-փրկարարական խմբերի աշխատանքները 30
4.1. Կամավորական հրշեջ-փրկարարական ջոկատը 31
4.2. Ինչպե՞ս են կամավորները տեղեկացվում արտակարգ իրավիճակների մասին 32
4.3. Արձագանքը արտակարգ դեպքի վայրում 34

1. Նպատակը

Այս կանոնները նկարագրում են, թե ինչպես պետք է Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը աշխատեն արտակարգ իրավիճակների ժամանակ:

Ի՞նչ են կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը

Սրանք այն խմբերն են, որոնք կամավոր օգնում են հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ:

Ինչու՞ են պետք այս կանոնները

Այս փաստաթուղթը օգնում է կամավորական հրշեջ-փրկարարական խմբերի անդամներին հասկանալու՝

- Ինչպես պետք է ստեղծվի և աշխատի խումբը,
- Ինչ պարտականություններ ունեն կամավորները,
- Ինչ տեխնիկական միջոցներ պետք են և այլն:

Ու՞մ են վերաբերում այս կանոնները

Այս կանոնները վերաբերում են բոլոր կամավորական հրշեջ-փրկարարական խմբերին: Կանոնները նաև այն համայնքների համար են, որոնք մասնակցում են արտակարգ իրավիճակների արձագանքման աշխատանքներին:

2. Ինչպե՞ս են գործում կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը

2.1. Ի՞նչ է ասում օրենսդրությունը

Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը կազմված են կամավորներից, որոնք օգնում են արտակարգ իրավիճակներում:

Ո՞վ է ղեկավարում կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը

- Խմբերը ենթարկվում են այն համայնքի ղեկավարին, որը ստեղծել և աջակցում է նրանց:
- Նրանք գործում են Ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության հաստատած կանոններով:

- Կամավորները պետք է հետևեն հատուկ փաստաթղթերով սահմանված կանոններին: Կանոններն օգնում են պահպանել կարգ ու կանոնը:

Ո՞վ է պատասխանատու մարդկանց և տարածքի պաշտպանության համար

- Պետությունն է պատասխանատու մարդկանց, գույքի և շրջակա միջավայրի պաշտպանության համար:
- Ներքին գործերի նախարարությունը իր Փրկարար ծառայության միջոցով կազմակերպում է մարդկանց պաշտպանությունը:

Որտե՞ղ են տեղակայված Փրկարար ծառայությունները

- Հայաստանի բոլոր 10 մարզերում և Երևանում կան Փրկարար ծառայության հատուկ կենտրոններ: Կենտրոններն ապահովում են հրշեջ-փրկարարական ծառայություններ:
- Եթե արտակարգ իրավիճակ է առաջանում, 101, 911 կամ 112 կարճ համարներին

զանգելու դեպքում ահազանգը հասնում է Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնին:

- Այս կենտրոնը պատասխանում է զանգին և տվյալները փոխանցում մարզերում գտնվող փրկարարական կենտրոններին:

Ինչպե՞ս են կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը աշխատում Փրկարար ծառայության հետ

- Կամավորական խմբերը կապ ունեն մարզային փրկարարական կենտրոնների հետ:
- Նրանք ստանում են հրամաններ պետական Փրկարար ծառայության կողմից:

2.2. Ի՞նչ կարգավիճակ ունեն կամավորները

Կամավորական հրշեջ-փրկարարական խմբի բոլոր անդամները ծրագրի շրջանակներում պաշտոնապես գրանցված են որպես Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորներ:

Կան երկու տեսակի կամավորներ՝ կամավոր փրկարարներ և աջակցող կամավորներ:

Կամավոր փրկարարներ

- Նրանք այն կամավորներն են, որոնք անցել են Ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության քննությունը:
- Նրանք իրավունք ունեն մասնակցելու արտակարգ իրավիճակների արձագանքման աշխատանքներին իրենց համայնքում:
- Նրանք կարող են աշխատել նաև այնտեղ, որտեղ աշխատում է պետական Փրկարար ծառայությունը:

Աջակցող կամավորներ

- Նրանք այն կամավորներն են, որոնք դեռ չեն անցել քննությունը:
- Նրանք չեն կարող մասնակցել փրկարարական աշխատանքներին: Նրանք կարող են մասնակցել Հայկական Կարմիր խաչի կազմակերպած հումանիտար օգնության աշխատանքներին:

2.3. Ի՞նչ հնարավորություններ ունեն կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը

Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը իրենց աշխատանքը կատարելու համար ունեն անհրաժեշտ սարքավորումներ և պատրաստված անձնակազմ:

Ի՞նչ միջոցներ ունեն կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը

- Հատուկ շենք, որտեղ գտնվում են կամավորները և անհրաժեշտ տեխնիկան:
- Հրշեջ կամ փրկարարական մեքենա, որը օգտագործվում է արտակարգ իրավիճակներում:
- Անձնական պաշտպանիչ միջոցներ, որոնք պաշտպանում են կամավորներին վտանգավոր իրավիճակներում (համազգեստ, սաղավարտ, ձեռնոցներ և այլն):

- Հրդեհը հանգցնելու համար նյութեր և գործիքներ:

- Առաջին օգնության բժշկական տուփ, որն անհրաժեշտ է վիրավոր մարդկանց օգնելու համար:

- Ռադիոկապի սարքեր, որոնք օգնում են կամավորներին խոսելու իրար հետ արտակարգ իրավիճակներում:

2.4. Որտե՞ղ են աշխատում կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը

Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը հիմնականում աշխատում են մեկ կամ մի քանի բնակավայրերում:
Այդ բնակավայրերը կոչվում են սպասարկման տարածք:



Ի՞նչ է սպասարկման տարածքը

- Այն շրջանը, որտեղ կամավորական հրշեջ-փրկարարական խումբը կարող է արագ արձագանքել արտակարգ իրավիճակների ժամանակ:
- Այս տարածքը որոշում է համայնքի ղեկավարը: Նա համաձայնեցնում է Ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության հետ:



- Սպասարկման տարածքում կարող են լինել մի քանի բնակավայրեր, որոնք աջակցում են կամավորական հրշեջ-փրկարարական խմբերին և տրամադրում անհրաժեշտ պայմաններ:

Ինչու՞ են որոշ բնակավայրեր ընտրվում սպասարկման տարածքի համար

- Քանի որ որոշ տարածքներ ավելի մոտ են կամավորական հրշեջ-փրկարարական խմբի շենքին,
- Որոշ տարածքներ ավելի մոտ են պետական փրկարարական ծառայության հրշեջ-փրկարարական կայանին,
- Որոշ համայնքներ ավելի լավ պայմաններ ունեն կամավորական փրկարարների աշխատանքը կազմակերպելու համար:

Կարո՞ղ են կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը աշխատել իրենց սպասարկման տարածքից դուրս

- Այո, բայց միայն բացառիկ դեպքերում և երբ համապատասխանում է այս կանոններին:

2.5. Ինչպե՞ս են աշխատում կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը պետական Փրկարար ծառայության հետ

Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը գործում են պետական Փրկարար ծառայության աջակցությամբ: Նրանց աշխատանքը համակարգում են հրշեջ-փրկարարական ջոկատները և ճգնաժամային կառավարման կենտրոնները:

2.6. Ո՞վ է օգնում կամավորական հրշեջ-փրկարարական խմբերին աշխատել

- Յուրաքանչյուր կամավորական հրշեջ-փրկարարական խումբ կցված է պետական Փրկարար ծառայության հրշեջ-փրկարարական ջոկատին:
- Այս ջոկատը պատասխանատու է արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար և աշխատում է կամավորների հետ:
- Յուրաքանչյուր կամավորական հրշեջ-փրկարարական խումբ նաև կապ ունի ճգնաժամային կառավարման մարզային կենտրոնի հետ:

2.7. Ինչպե՞ս են կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը տեղեկացվում արտակարգ իրավիճակների մասին

Կամավորական խմբերը իրենց մոտ չունեն հատուկ համակարգեր, որոնք ընդունում են արտակարգ զանգեր:

Եթե ինչ-որ մեկը տեսնում է վտանգավոր դեպք, նա պետք է զանգահարի այս համարներին՝

- 101 – Հրշեջ ծառայություն
- 911 կամ 112 – Փրկարար ծառայություն
- 102 – Ոստիկանություն
- 103 – Շտապ օգնություն
- 104 – Գազի արտահոսք

Ճգնաժամային կառավարման մարզային կենտրոնները ստանում են բոլոր զանգերը և տեղեկացնում կամավորներին, երբ նրանց օգնությունն անհրաժեշտ է:



Կամավորները կարող են նաև տեղեկացվել համայնքի ղեկավարի կամ ականատեսների միջոցով, եթե տեղի ունեցած դեպքի մասին տեղեկությունը համայնքն է փոխանցում:

2.8. Ինչպե՞ս են ապահովվում կամավոր հրշեջ-փրկարարների անվտանգությունը

Կամավոր հրշեջ-փրկարարների անվտանգությունն ավելի կարևոր է, քան առաջադրանքը:

Ինչպե՞ս պետք է պահեն իրենց կամավոր հրշեջ-փրկարարները

- Նրանք պետք է հետևեն անվտանգության բոլոր կանոններին և հրահանգներին:
- Պարտադիր է համապատասխան հագուստ և անհատական պաշտպանիչ միջոցներ (օրինակ՝ հակագազ, սաղավարտ, ձեռնոցներ, հատուկ կոշիկներ) կրելը
- Իրենց անվտանգության մասին մտածելուց հետո, պետք է հոգ տանեն նաև մյուս կամավորների, պետական փրկարարների և բնակիչների անվտանգության մասին:

2.9. Ինչ փաստաթղթեր են կարգավորում կամավոր հրշեջ-փրկարարական խմբերի աշխատանքը

Կամավոր հրշեջ-փրկարարների աշխատանքը սահմանվում է հատուկ փաստաթղթերով:



- **Գործելակարգ** – նկարագրում է, թե ինչպես պետք է աշխատեն կամավորները:

- **Ստանդարտ գործողությունների ընթացակարգեր** – ներկայացնում է, թե կոնկրետ իրավիճակներում ինչ քայլեր պետք է անել:

- **Հրշեջ-փրկարարական գործողությունների ուսումնական ձեռնարկ** – օգնում է կամավորներին սովորելու իրենց գործը:



- **Կանոններ և կարգավորումներ** – սահմանում են ընդհանուր կանոնները, որոնք պետք է պահպանվեն:

2.10. Ո՞վ է վճարում կամավորական հրշեջ-փրկարարական խմբերի ծախսերը

Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերի աշխատանքը ֆինանսավորվում է համայնքի կողմից:

Ի՞նչ ծախսեր են հոգում համայնքները

- Վառելիք՝ փրկարարական մեքենաների համար,
- Գործողության ընթացքում վնասված սարքավորումների

նորոգում կամ փոխարինում,
- Տրանսպորտային փոխհատուցում,
- Ըմպելիքներ և սնունդ երկարատև աշխատանքի ընթացքում,
- Եթե ավելի մեծ ծախսեր են պահանջվում, դրանք կարող են ֆինանսավորվել այլ աղբյուրներից: Այդ աղբյուրները պետք է նշված լինեն այս փաստաթղթում:

3. Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերի առաքելությունը

Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերի հիմնական առաքելությունը արտակարգ իրավիճակների դեպքում մարդկանց, գույքի և շրջակա միջավայրի պաշտպանությունն է:

Ինչպե՞ս են կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը պատրաստվում իրենց առաքելությանը

Խմբի ղեկավարը պատասխանատու է, որ կամավորական հրշեջ-փրկարարական խումբը միշտ

պատրաստ լինի արձագանքել արտակարգ իրավիճակներին:

Բոլոր անդամները պետք է մասնակցեն հետևյալ գործողություններին՝

- Ուսուցման դասընթացներ՝ սովորելու, թե ինչպես արձագանքել արտակարգ դեպքերին,
- Վարժանքներ՝ ձեռք բերած գիտելիքները կիրառելու համար,
- Տեխնիկական միջոցների, շենքերի և սարքավորումների խնամք և վերանորոգում,
- Հանրության իրազեկում՝ բնակիչներին տեղեկացնելու, թե ինչ անել արտակարգ իրավիճակներում:

Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերի հիմնական պարտականությունները

Անհրաժեշտության դեպքում աջակցություն սպասարկման տարածքից դուրս՝

- **Համայնքի մակարդակում՝** աշխատելով համայնքային

Փրկարար ծառայության հետ,

- **Մարզի մակարդակում՝** օգնելով մարզային փրկարարական ծառայությանը,
- **Ազգային մակարդակում՝** աշխատելով պետական Փրկարար ծառայության հետ:

Մասնակցություն հումանիտար աջակցության ծրագրերին՝

- Կամավորները կարող են նաև աջակցել Հայկական Կարմիր խաչի կազմակերպած ծրագրերին, որոնք օգնում են աղետից տուժած մարդկանց:

3.1. Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերի աջակցությունը պետական Փրկարար ծառայությանը

Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը կարող են աջակցել պետական Փրկարար ծառայությանը արտակարգ իրավիճակների դեպքում: Նրանք մասնակցում փրկարարական աշխատանքներին:

3.1.1. Ովքե՞ր են համակարգում արտակարգ իրավիճակներին արձագանքումը

Հայաստանում արտակարգ իրավիճակներին արձագանքումը կազմակերպվում է տարբեր մակարդակներում:



Հանրապետական մակարդակում

Եթե արտակարգ իրավիճակը շատ մեծ է (օրինակ՝ ուժեղ երկրաշարժ, մեծ անտառային հրդեհ), ապա

- ՀՀ վարչապետը ստեղծում է Արտակարգ իրավիճակին արձագանքող հանրապետական հանձնաժողով,
- Բոլոր նախարարությունները և պետական կառույցները մասնակցում են արձագանքմանը:

Մարզային մակարդակում

Եթե արտակարգ իրավիճակը տեղի է ունենում մարզում, ապա մարզպետը ստեղծում է Արտակարգ իրավիճակին արձագանքող մարզային հանձնաժողով,

- Այս հանձնաժողովը ներառում է քաղաքապետերին, համայնքների ղեկավարներին և պետական կառույցների մարզային ներկայացուցիչներին:

Համայնքային մակարդակում

- Եթե արտակարգ իրավիճակը տեղի է ունենում մեկ համայնքում, ապա համայնքի ղեկավարը ստեղծում է Արտակարգ իրավիճակին արձագանքող համայնքային հանձնաժողով,
- Այս հանձնաժողովի կազմում կարող են լինել դպրոցների տնօրենները, հիվանդանոցի ղեկավարները և այլ տեղական կառույցների ներկայացուցիչներ:

Ովքե՞ր են ղեկավարում փրկարարական աշխատանքները

- Կամավորները ենթարկվում են պետական Փրկարար ծառայության հրամանատարին,

- Եթե անհրաժեշտ է, նրանք կարող են զեկուցել տարբեր պատասխանատուների, կախված իրավիճակից:

Աջակցող կամավորները, որոնք չեն մասնակցում անմիջական գործողություններին, կարող են՝

- Տրամադրել ջուր և սնունդ փրկարարների համար,
- Կազմակերպել տեխնիկական միջոցների առաքումը,
- Բացել վրաններ,
- Կառավարել տեղում օգնել ցանկացող մարդկանց, որպեսզի նրանք չխանգարեն մասնագետների աշխատանքին:

3.1.2. Ե՞րբ կարող է ամբողջ կամավորական հրշեջ-փրկարարական խումբը մասնակցել գործողություններին

Եթե արտակարգ իրավիճակը շատ մեծ է, ապա ամբողջ խումբը կարող է ներգրավվել, և ոչ միայն մեկ ջոկատ (մի քանի կամավոր և հրշեջ մեքենա):

- Սա հնարավոր է, երբ պետության հրահանգով անհրաժեշտ է լրացուցիչ ուժեր ներգրավել:

- Համայնքի ղեկավարությունը և պետական Փրկարար ծառայությունը որոշում են, թե որ կամավորներին պետք է ներգրավել:

Ինչպե՞ս է աշխատում կամավորական հրշեջ-փրկարարական խումբը անտառային հրդեհի դեպքում

Օրինակ՝ անտառային հրդեհի ժամանակ՝

- 6 կամավոր փրկարար իրենց հրշեջ մեքենայով գնում են օգնելու:
- Պետական Փրկարար ծառայությունը ներգրավում է 16 կամավոր փրկարար, որոնք օգտագործում են՝
    - 5 կամավոր՝ ջրի ուսապարկ պոմպերով,
    - 4 կամավոր՝ հրշեջ փոցխերով,
    - 3 կամավոր՝ անտառի հրդեհաշիջման փոցխերով,
    - 2 կամավոր առաջին օգնության հավաքածուներով:

3.1.3. Ինչպե՞ս են կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը աջակցում տարբեր մակարդակներում

Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը կարող են աջակցել արտակարգ իրավիճակների արձագանքման գործողություններին համայնքի, մարզի կամ ամբողջ երկրի մակարդակում:

Աջակցություն համայնքի սահմաններում իրականացվող գործողություններին

Եթե անհրաժեշտ է, համայնքի ղեկավարությունը և Փրկարար ծառայությունը կարող են խնդրել կամավորական հրշեջ-փրկարարական խմբի աջակցությունը համայնքի այլ տարածքներում:

Ինչպե՞ս է դա կազմակերպվում

- Հայտը ներկայացնում է՝ համայնքի ղեկավարը,
- Հաստատում է՝ Հայկական Կարմիր խաչի գլխավոր քարտուղարը,
- Վթարափրկարարական աշխատանքները ղեկավարում է՝ Ներքին գործերի նախարարության

Փրկարար ծառայության հրամանատարը,

- Ֆինանսավորումը ապահովում է՝ համայնքը կամ այլ աջակցող կառույց (Հայկական Կարմիր խաչ, մարզպետարան և այլն):

Աջակցություն մարզի սահմաններում իրականացվող գործողություններին

Մարզի իշխանությունները կամ Փրկարար ծառայությունը կարող են խնդրել կամավորական խմբին աջակցել այլ համայնքներին:

Ինչպե՞ս է դա կազմակերպվում

- Հայտը ներկայացնում է՝ արտակարգ իրավիճակին արձագանքող մարզային հանձնաժողովը,
- Հաստատում են՝ Հայկական Կարմիր խաչի գլխավոր քարտուղարը և կամավորական խմբի համայնքի ղեկավարը,
- Վթարափրկարարական աշխատանքները ղեկավարում է՝ Ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության հրամանատարը,

- Ֆինանսավորումը ապահովում է՝ ընդունող համայնքը, մարզը կամ այլ աջակցող կառույց (Հայկական Կարմիր խաչ, պետություն և այլն):



Աջակցություն մարզի սահմաններից դուրս իրականացվող գործողություններին

Եթե արտակարգ իրավիճակը տեղի է ունենում այլ մարզում կամ ողջ երկրում, պետական կառույցները կարող են խնդրել կամավորական հրշեջ-փրկարարական խմբի աջակցությունը:

Ինչպե՞ս է դա կազմակերպվում

- Հայտը ներկայացնում է՝ արտակարգ իրավիճակին արձագանքող հանրապետական հանձնաժողովը,
- Հաստատում են՝ Հայկական Կարմիր խաչի գլխավոր քարտուղարը և կամավորական խմբի համայնքի ղեկավարը,
- Վթարափրկարարական աշխատանքները ղեկավարում է՝ Ներքին գործերի նախարարության

Փրկարար ծառայության հրամանատարը,

- Ֆինանսավորումը ապահովում է՝ ընդունող համայնքը, մարզը կամ այլ աջակցող կառույց (Հայկական Կարմիր խաչ, պետություն և այլն):

3.1.4. Ինչպե՞ս է ապահովվում կամավորների անվտանգությունը Փրկարար ծառայության հրամանատարության ներքո

Ինչպե՞ս է ապահովվում կամավորների անվտանգությունը

- Կամավորները ենթարկվում են պետական Փրկարար ծառայության հրամանատարներին:
- Հրամանատարները պատասխանատու են, որ կամավորներին չհանձնարարեն այնպիսի առաջադրանքներ, որոնք նրանք չեն կարող անվտանգ կատարել:

Ի՞նչ չի կարելի պահանջել կամավորներից

- Չի կարելի պահանջել աշխատել, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:

- Եթե առաջադրանքը պահանջում է ավելի մեծ փորձ, քան նրանք ստացել են վերապատրաստման ընթացքում:

3.2. Մասնակցություն Հայկական Կարմիր խաչի մարդասիրական օգնության աշխատանքներին

Եթե տեղի է ունենում մարդասիրական ճգնաժամ (օրինակ՝ բնական աղետ, պատերազմ), կամավորական հրշեջ-փրկարարական խումբը կարող է աջակցել Հայկական Կարմիր խաչի ծրագրերին՝

- Օգնության պարագաների բաշխում,
- Հոգեբանական առաջին օգնության տրամադրում,
- Այլ մարդասիրական աշխատանքներ:



Ինչպե՞ս է դա կազմակերպվում

- Հայտը ներկայացնում է՝ Հայկական Կարմիր խաչի գլխավոր քարտուղարը,
- Հաստատում է՝ կամավորական խմբի համայնքի ղեկավարը,

- Վերահսկողությունը իրականացնում է՝ Հայկական Կարմիր խաչի գործառնությունների ղեկավարը,
- Ֆինանսավորումը ապահովում է՝ Հայկական Կարմիր խաչը, համայնքը կամ այլ աջակցող կառույց (մարզպետարան, պետություն և այլն):

4. Ինչպե՞ս են կազմակերպվում կամավորական հրշեջ-փրկարարական խմբերի աշխատանքները

ՊԱՐՏԱԴԻՐ Է

Կամավորական հրշեջ-փրկարարական խմբերը աշխատում են հստակ կանոնների և հրահանգների համաձայն, որպեսզի արձագանքեն արտակարգ իրավիճակներին իրենց համայնքում և, անհրաժեշտության դեպքում, մարզի կամ երկրի այլ հատվածներում:

Կամավոր փրկարարների պարտականությունները

- Կամավորները պարտավոր են արձագանքել արտակարգ իրավիճակներին, բայց ոչ անպայման ապահովել 100% հաջողություն:
- Նրանց փորձն ու հմտությունները կզարգանան ժամանակի ընթացքում:

4.1. Կամավորական հրշեջ-փրկարարական ջոկատը

Կամավորական ջոկատը կազմված է 6 ատեստավորված կամավոր փրկարարից, որոնք պետք է՝

- 10 րոպեում հասնեն հենակետ,
- 15 րոպեում պատրաստ լինեն հրշեջ մեքենայով մեկնել դեպքի վայր:

Մյուս կամավորները մնում են հենակետում և աջակցում խմբին:

Ջոկատի կազմը

- Հրամանատար (1 անձ) – ղեկավարում է անձնակազմին և հաճախ նաև ամբողջ գործողությունը,
- Վարորդ (1 անձ) – վարում է հրշեջ մեքենան, վերահսկում գործիքները,
- Թիմի ավագներ (2 անձ) – ղեկավարում են փրկարարական աշխատանքները,
- Վերակարգ (1 անձ) – օգնում է մինչև մեկնումը և վերադարձից հետո:

4.2. Ինչպե՞ս են կամավորները տեղեկացվում արտակարգ իրավիճակների մասին

Տեղեկացման համակարգողը պատասխանատու է բոլոր տեղեկացումների համար: Տեղեկացնել կարող են

- ՆԳՆ Փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման կենտրոնը,
- Տեղի բնակիչները, որոնք զանգահարում են:

Երկու եղանակ կա՝

1. Ազդարարել բոլոր կամավորներին – երբ խումբը փոքր է (12 կամավորից պակաս),
2. Ազդարարել միայն հերթապահ կամավորներին – երբ խումբը մեծ է (12 կամավորից ավելի)՝ խուսափելու շփոթից:



Ինչպե՞ս են կամավորները արձագանքում

- «+» – եթե կարող են մասնակցել,
- «-» – եթե չեն կարող մասնակցել:

Անմիջական գործողություններ

- 10 րոպեի ընթացքում կամավորները պետք է հասնեն հենակետ,
- 15 րոպե անց հրշեջ մեքենան պետք է պատրաստ լինի մեկնելու դեպքի վայր:

4.3. Արձագանքը արտակարգ դեպքի վայրում





- Ժամանելուց հետո թիմը նախ գնահատում է իրավիճակը,
- Անմիջապես տեղեկացնում են մարզային ճգնաժամային կենտրոնին,
- Կազմակերպում են անվտանգության միջոցառումներ ինչպես իրենց, այնպես էլ բնակիչների համար,
- Սկսում են փրկարարական գործողությունները՝
    - Մարդկանց ու կենդանիներին դուրս են բերում վտանգավոր տարածքից,
    - Տուժածներին տրամադրում են առաջին բժշկական օգնություն,
    - Սկսում են հրդեհը հանգցնելու աշխատանքները,
    - Ձեռնարկում են միջոցառումներ շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու համար:

Մինչև պետական փրկարարների ժամանումը Կամավորական խմբի հրամանատարն է ղեկավարում գործողությունները:

Պետական փրկարարների ժամանումից հետո՝

- Կամավորները զեկուցում են պետական Փրկարար ծառայության հրամանատարին,
- Նրանց հրամանատարությունն անցնում է պետական փրկարարների պատասխանատուին,
- Կամավորները շարունակում են աշխատել իրենց խմբի հրամանատարի ղեկավարությամբ, բայց պետական հրամանատարի հրահանգներով: